



# Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ

## ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ


(Տպավորություններ)

«Ընթանալ ամենեքին ընթանան, բայց մի ռ՛ առնու՝ զյաղրու-  
բեանն. այնպէս ընթացարու՛ր զի հասանիցէ՛ք»:

Ա. ԿՈՐՆԹ., Բ. 24

Հունվարի 11-ի ա-  
ռավոտն է: Մայր Տա-  
ճարը զարդարվել է  
տոնականորեն: Ուխ-  
տավորների ու հա-  
վատացյալների քաղ-  
մովթյունը լցրել է վա-  
ղուց եկեղեցին: Հնչում  
են հիմնավորց տա-  
ճարի զանգերը, սուրբ  
պատարագի հրավիրե-  
լով հավատացյալնե-  
րին:

Այդ օրը վարդապե-  
տական իր անդրանիկ  
ձեռնադրությունն է  
կատարում գերաշնորհ  
տեղ Սահակ եպիսկո-  
պոսը: Եկեղեցու պատ-  
մական կամարների  
տակ ձեռնադրության  
պահին հնչում է «Ու-  
րախ լեր, Սուրբ Եկե-  
ղեցի» հոգեգմայլ շա-  
րականը: Իրապես այդ  
օրը ուրախ է Եկեղե-  
ցին: Դարեր շարունակ  
հնչել է այդ շարականը Հայաստանյայց Եկե-  
ղեցու լուսեղեն սեղանների առաջ, ամեն  
անգամ, երբ ժողովրդի ծոցից եկել են մար-  
դիկ, եկեղեցու սպասավորներ և մշակներ,  
իրենց ողջ գիտակցական կյանքը նվիրելու,  
զոհաբերելու Հայաստանյայց Եկեղեցու պալ-  
ծառության, «ուրախության» համար, երի-



տասարդ հասակից  
սկսած մինչև պատկա-  
ռելի ալևոր ծերունի-  
ները: Քանին ըր ծոնկ  
են շոքել, ուխտել այդ  
սեղանների առաջ՝ քո-  
լորանվեր ծառայելու  
հայ ժողովրդին, Եկե-  
ղեցուն, Հայրենիքին:  
Նրանք իրենց պարտքը  
կատարել են «ստանց  
ամօթոյ» և անցել,  
նրանց հետքերով եկել  
են նոր սերունդներ,  
ծունկ շոքել, ուխտել,  
որ պալծառ վստի  
Լուսավորչի կանթեղը  
հայ հորիզոնի և հայ  
երկնակամարի վրա,  
և աննահանջ տարել  
իրենց «քաղցր լուծ»-ը  
հանուն ժողովրդի,  
հանուն Եկեղեցու:

«Առ զսուրբ դասա-  
դանսի ձեռաց Հոգւոն  
Սրբոյ, ունել իշխանու-  
թիւն քարոզել զբանն  
կենաց ողջամիտ վարդապետութեամբ յունկն  
հաւատացելոց...», ըստ Հայաստանեայց  
Եկեղեցւոյ, առանց 'աշառանաց և երկիրդի  
ուսո՛ւ և խրատեա՛, սաստեա՛, յանդիմանեա՛,  
և դարձեալ մխիթարեա՛ ըստ առաքելոյն  
բանի...»:

Հուզիչ և սրտազրավ է պահել Ձեռնադրող

սրբազանի առաջ ծննդ է չղբել մի պատկառելի ծերունի, որն արդեն 50 տարի անբասիր կերպով ծառայել է Եկեղեցուն որպես քահանա, նեղել է «մշակ առանց ամօթոյ», իսկ այժմ տարիների բեռն տակ, բայց հոգով և սրտով արի, ծունր է դրել, ուխտում է ավելի ծանր և պատասխանատու ծառայություն կատարել իր ժողովրդին, իր Եկեղեցուն, իր Հայրենիքին: Պարտականության գիտակից ձայնն է նրան կանչել, և նա գնում է այդ ձայնի հետևից, ինչպես նրանից առաջ հազարներ գնացել են աննահանջ այնտեղ՝ ուր հոգին և պարտքի ձայնը տարել են նրանց: «Բազումք են կոչեցեալք, բայց սակաւք են ընտրեալք»:

Նորընծա տեր Վարդան վարդապետ Տեր-Սահակյանը ծանոթ դեմք է Կովկասի հայ հոգեւորականության շարքերում: Նա ծնվել է 1878 թվին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Գյուլաթաղ գյուղում, գյուղական քահանայի ընտանիքում: Պատանի Վարդանը նախնական կրթությունն ստացել է ծխական դպրոցում, ապա պետական հրնգամյա դպրոցում շարունակել է իր ուսումը: Մի որոշ ժամանակ զբաղվել է գյուղատնտեսությամբ, ապա մտել է Շուշիի թեմական դպրոցը և ավարտելուց հետո ուսուցչությամբ է զբաղվել Լեռնային Ղարաբաղի զանազան գյուղերում: 1904 թվին ձեռնադրվել է քահանա և փոխադրվել է Հյուսիսային Կովկաս, Գրոզնի քաղաքը: Երկար ժամանակ էլ եղել է ավագ քահանա Բաքվի հայոց եկեղեցում:

1951 թվին տեր Վարդանը դիմում է տվել Վեհափառ Կաթողիկոսին՝ մտնելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության շարքեր, իբր կուսակրոն ծառայելու:

Նրա ցանկությունը կատարվեց հունվարի 11-ին:

Ձեռնադրության վերջում, տեր Սահակ եպիսկոպոսը խոսեց խրատական: «Վարդան հայր սուրբ,— ասաց ձեռնադրող սրբազանը,— հին հոգեւորական ես, 50 տարի ծառայել ես հայ ժողովրդին և Եկեղեցուն, և այսօր պարտքի խորը գիտակցությամբ

մտնում ես Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության շարքը: Քո հիսնամյա քահանայական գործունեությունը մեծ գրավական է քեզ համար, որ խորը համոզմամբ ընդունում ես այս նոր պարտականությունը քո ուսերի վրա: Ինչպես երկար տարիներ անձնըվեր շանսախրությունը ծառայել ես Հայաստանյայց Եկեղեցուն և հայ ժողովրդին, լիահույս եմ, որ սրանից հետո էլ մեծ եռանդով կծառայես մեր ժողովրդին քո հոգու ջերմությամբ և պարտաճանաչությամբ: Ուրախ եմ և երջանիկ նրա համար, որ ձեռն չեմ դրել անարժանի վրա: Դեռ ականջումս հնչում է Վեհափառ Հայրապետի խրատը, իմ եպիսկոպոսական ձեռնադրության օրը. «Մի՛ երբեք զանարժանս և զարեցողս կոչել ի կարգ և մի՛ պղծել զձեռս քո կաշառօք՝ զանարժանս նովաւ յառաջ կոչել ի ձեռնադրութիւն», իմ անդրանիկ ձեռնադրությունը քեզ վրա կատարվեց: Խղճի ամենայն հանգստությամբ շնորհեցի քեզ արեղայական և մասնավոր վարդապետության կոչում: Մաղթում եմ նոր եռանդ և ավյուն քո նոր գործունեության մեջ: Օրհնի՛ր մեզ և այս ժողովրդին քո անդրանիկ վարդապետական օրհնությամբ»:

\*\*\*

Քրիստոսի «Անուանակոչութեան տօն»-ի օրը, կիրակի, նորընծա տեր Վարդան վարդապետը, հավատացյալների բազմության ներկայությամբ, մատուցեց իր անդրանիկ պատարագը, Քառաձայն երգչախումբը երգում էր Եկմայանի սուրբ պատարագը: «Հայր մեր»-ի ժամանակ քարոզեց տեր Վարդան վարդապետը և օրհնեց ժողովրդին:

Ուրախ էր Եկեղեցին: Ուրախ էին Սուրբ Աթոռի միաբանությունը և հավատացյալ ժողովուրդը:

Աղոթենք, որ Տերը նոր մշակներ պատրաստի իր սուրբ գործի և Ս. Եկեղեցու համար, և միշտ վառ պահի Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պայծառ ջահը:

«Քաղաւո՛ր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա՛լ»:

